

Ցարական գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Փայտարարութիւն ընդունում է ամեն լիզուով.

Փայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տիկին Կատարինէ Մկրտչեան Էն Ֆիւսանց իր որդոց հետ,
սրտի ցաւով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, առաջինը իր
ամուսնու, միւսները իրանց հօր՝

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ՄԿՐՏՉԵԱՆ ԷՆ ՖԻՍԱՆՑԻ ԱՆՃԵԱՆՑԻ

մահւան մասին: Յուշարկաւորութիւնը տեղի կունենայ հինգշաբթի օր, մարտի
21-ին, առաւօտեան 10 ժամին, դէպի վանքի մայր եկեղեցին, իր բնակարանից,
Նիկոլայեան ճակատի, ծխախոտի գործարանի շինութեան մէջ:

Ամբիճքը կը կատարվի չորեքշաբթի, մարտի 20-ին, հանգուցեալի բնակարանում,
երեկոյեան 6 1/2 ժամին:

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց հարցի մի նոր յաղթանակ.— Ներքին
Տեսչութիւնը, Մեր գաւառի օրվայ խնդիրը, Հրա-
տարակցական ընկերութեան ընդհանուր ժողովը.
Աշխարհագրական ընկերութեան նիստը. Նամակ
երեսնից. Նամակ իգորից. Նամակ խմբագրու-
թեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. վերջին տեղեկու-
թիւններ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՐԻՒՆԵՐ.—
ԲՕՐՄԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. վեցհարկաւոր օսմանեան իշխանու-
թեան.

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՅԻ ՄԻ ՆՈՐ ՅԱՂԱՐԱՆԱԿ

Անցեալ փետրվար ամսի 27-ին Ֆրանսիական պարլամենտը քուէարկեց և ընդունեց մի նոր օրինագիծ, որը ահագին փոփոխութիւն պէտք է առաջ բերի Ֆրանսիայի ընտանեկան և սոցիալական կեանքի մէջ: Այդ նոր օրէնքով, կանանց իրաւունքի հարցը մի նշանաւոր և անսպասելի յաղթանակ տարաւ:

Վերին աստիճանի զարմանալի մի երեւոյթ է, որ Ֆրանսիայում, «հասարակութիւն, եղբայրութիւն, ազատութիւն» դադարեալները քարոզող երկրում, մինչև այսօր կինը անկախ վիճակի մէջ չէր գտնուում: Այդ դուշէ շատերին անհաւատալի երևայ, բայց կատարեալ իրողութիւն է: Ֆրանսիական «Code Civil» օրինադրեքը, այն, որ շատ ազգերի նորադրոյն օրէնսդրութեան համար ծառայել է իբրև աղբիւր, որի առաջ նշում է իստորհիւմ են ամեն նանջանաւոր իրաւագէտները, մինչև այսօր պահպանել է հոռիական իրաւունքի փորձանքները կնոջ վերաբերմամբ.— ամուսնացած կինը ենթարկված է իր ամուսնու կա-

տարեալ կամայականութեան և ստրկական ծառայութեան: «Code Civil»-ի հիման վրա, ամուսնացած Ֆրանսուհին իրաւունք չունի ազատաբար և անկախ կերպով տնօրինել իր գոյքը և այն բոլորը, ինչ որ նա ձեռք է բերում իր սեփական աշխատանքով: Կնոջ գոյքը դրված է ամուսնու անկողնաւոր կառավարութեան ներքոյ. կինը իրաւունք չունի իր բարեհայեցողութեամբ ստանալ իր օրէկան վատաւը և գործադրել իր ցանկութեան համաձայն:

Հարուստ դասակարգը Ֆրանսիայում, կամ, ինչպէս ասում են, դրամական արիւտակրատիան, ամեն կերպ աշխատում էր պահպանել «Ֆրանսիական դեմոկրատիական» հանրապետութեան մէջ նախկին ստրկութեան ֆիւգիտիւնը այդ ձեռքով: «Ընտանեկան հիմունքը» և «խաղաղ կուլտուրական կեանքի սկզբունքը» պաշտպանելու պատրուակով Ֆրանսիայ չէր կայ, որ այդպիսի բուրժուական հայեացքը ամուսնին ազամարդի և կնոջ մէջ եղած յարաբերութիւնները մասին, յարաբերութիւններ, որոնք իրանց էութեամբ միանգամայն ըստրկական են և խոր անբարոյականացուցիչ ազդեցութիւն են գործում ընտանեկան կեանքի վրա, — վաղուց յարուցել է իր դէմ լաւազոյն մտքերի և կանանց իրաւունքի հարցը պաշտպանողների բոլորը:

Այդ պաշտպանները, հիմք ընդունելով այն հանդիմանքը, որ այդպիսի մի օրէնք ոչ թէ պահպանում է ընտանեկան կեանքի հիմունքը կամ օջախի յարստութիւնը, այլ պարզապէս դարձնում է կնոջ ստրկ, որը աշխատում է իր ամուսնու համար, իսկ ամուսնուն տէր, — ամեն ջանք գործ էին դնում փոխել տալու այդ օրէնքը և նոր օրէնք ստեղծելու, մասնաւորապէս եւրոպական ուրիշ, անկիւն քիչ քաղաքակիրթ եր-

կիրներում, այդպիսի անբնական յարաբերութիւններ ամուսնուներին մէջ վաղուց ընդունված են:

Սակայն Ֆրանսիական պարլամենտը, որ ներկայացնում է միայն բուրժուակայի շահերը, ամեն անգամ երբ ձգտումներ էին լինում առաջարկելու կնոջ իրաւունքները պաշտպանող և ազամարդի իշխանութիւնը չափաւորող նոր օրէնագիծ, ընդդիմանում էր և մերժում այդ առաջարկը: Անցեալ տարվայ վերջերս, կանանց իրաւունքի պաշտպան պատգամաւոր Գուարանը առաջարկեց պարլամենտին մի ամփոփ և վերին աստիճանի համառոտ նոր օրէնքի ծրագիր, հետեւեալ բովանդակութեամբ. «Ամուսնութեան կողմից ընդունված որ և է բէժիմի ժամանակ, կինը իրաւունք ունի ստանալու առանց իր ամուսնու աջակցութեան այն բոլոր գումարները, որ նա վատաւում է իր անձնական աշխատանքով, և ազատօրէն գործածել»: Այդ ծրագրի հեղինակը և նրա կողմնակիցները աշխատեցին անցկացնել պարլամենտում ծրագիրը մի այնպիսի ժամանակ, երբ պարլամենտը զբաղված է լինում աղմկալի և զայլախաղաղ գործերի քննութեամբ, լաւ համազգած լինելով, որ ներկայ բուրժուական պարլամենտը սրտով և համոզմունքով դէմ է այդ տեսակ օրէնքներին: Եւ ձեռնարկ, անցած փետրվար ամսի 27-ին, պարլամենտը ամենեւին ուշադրութիւն չէր դարձնելով իրան առաջարկած ծրագրի նպատակի վրա, ընդունեց նոր օրէնքը զրեթէ միաձայն: Նոյն իսկ մասնաւոր ուշադրութիւն չէր դարձնել, ասում է «Temps» լրագիրը, պարլամենտի այդ պատմական և նշանաւոր վճռի վրա, զբաղված լինելով զայլախաղաղ մեկնացումներով և «առանց վիճաբանութեան ընդունեց մի օրէնք, որ իրաւունք է տալիս ամուսնացած կնոջը սյուսահեղ ազատօրէն անսովոր միջոցներով և նշանաւոր աշխատանքի արդիւնքով բայց այդ օրէնքը, որ ամբողջ մի յետափոխութիւն է, քանզի իրաւագէտների հին շինութիւնը և ջրվեց այն փոշին, որ բերված էր Հռոմի ֆորումից»:

Կանանց իրաւունքի պաշտպաններին միևնույն է միայն ուրախանալ, որ կինը Ֆրանսիայում ազատվեց այսուհետեւ այնպիսի մի անարդար և ստրկական վիճակից, որին նա ենթակայ էր դարերից ի վեր:

Կայսրերի համարելով Այս մականունը այնքան դուրեկան էր օսմանեան սուլթաններին, որ մինչև վերջին ժամանակներս բոլոր պատմաբանները և բանաստեղծները դեռ գործ էին անում այդ տիտղոսները, և օսմանեան դասականները ոչ միայն արեւելեան կայսրերի բոլոր կալածանքի պրեմիւններն էին, այլ մինչև անգամ երազում էին մի օր դա՛ն նոյն իսկ Հռոմ փոխադրված տեսնել: Երբ օսմանեան սուլթանները ենդալներին օջախների (զօրանոց) մօտով անցնում էին, 61-րդ դարի հրամանատարները մի բաժակ օջախի ներկայացնելու, սուլթաններն ասում էին.— «Բնկեր, տայ Ալլահը, որ քեզ հետ սոյն բաժակը ոսկէ բլուրի վրա (Հռոմի) լուսնը»:

Այս վեց դարերի շրջանում օսմանեանները բարձրանալու և աստիճանաբար քայքայվելու պատմութեան քննադատութիւնը թողնելով ուրիշ աւելի աջող առիթի կարեւոր ենք համարում մի քանի պատմական նկատողութիւններ ներկայացնել «Վայկի» ընթերցողներին, այդ վեց դարերի վրա մի հարկանքի ակնարկ գցելու համար:

Առաջին երեք դարերում օսմանեանները տիրեցին եւրոպայում քսան և հինգից աւելի մանր և անկախ իշխանութիւններ, նոյնքան էլ Ա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԳԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ

Մեր գաւառական քաղաքներում օրվայ խնդիրը.— քաղաքային ինքնավարութեան մէջ մասնաւորական տարրի մասնակցութեան խնդիրն է: Միայն է մի տեսակ խուլ պայքար քրիստոնեայ և մասնաւորական տարրի մէջ, այն ևս այնպիսի վնասակար հողի վրա, ինչպիսին է ազգայնական և կրօնական հողը: Այդ պայքարը, որ մղվում է Գանձակում, Դուլում, վարակիչ կերպով կարող է ազդել և գաւառական միւս քաղաքները.— Ղուբայի, Դամախու, Նուխու, Հին-Նախիջևանի և բոլոր այն քաղաքների ու ավանների վրա, որտեղ ազգայնականութիւնը խառն է և կազմված է զլաւաւորապէս հայ և թուրք տարրերից: Եւ որովհետեւ մեր երկրի կանոնաւոր դարաքայման գործին միանգամայն վնասակար է այդպիսի մի պայքար, որ կարող է թշնամութիւն և ատելութիւն սերմանել մի և նոյն պետութեան հպատակների և մի և նոյն երկրի քաղաքացիների մէջ, ուստի թէ քրիստոնեայ և մասնաւորական հասարակութեան ինտելիգենտ և բանիմաց մասի և թէ մասնաւոր մեր երկրի մասնաւոր պարտաւորութիւնն է հասկացնել հայ և թուրք ժողովուրդներին այդ պայքարի բոլոր վնասակարութիւնը, և նրա առաջն առնել:

Բայց առաջ պարզենք վե՛հի առարկայ եղող խնդրի էությունը, մասնաւորապէս որ չառանցեալ, ինչպէս երևում է տեղեկութիւններից, լաւ չեն ըմբռնում քաղաքային կանոնադրութեան այն յօդուածների իմաստը, որոնք վերաբերում են մասնաւորականների մասնակցութեան խնդրին:

Այժմ գործադրվող քաղաքային կանոնադրութեան 44-րդ յօդուածի մէջ ասված է.— «Ոչքրիստոնեայ ձայնաւորների թիւը չը պէտք է անցնի ձայնաւորների ընդհանուր թիւի 1/5 մասից, բայց այն քաղաքներում, որտեղ քրիստոնեաների թիւը պակասութեան պատճառով այդ կանոնի իրագործումը դժուարութեան հանդիպի, ներքին գործերի միջոցով, տեղական ատենի որոշման համաձայն՝ թույլատրում է չեղունակ այդ կանոնից»:

Պարզ է, որ օրէնքով, մասնաւորականները կարող են մասնակցել քաղաքային ինքնավարութեան գործին, միայն 1/5-ական մասով, բայց գործնական կեանքի մէջ չառանց ստիպված

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՅՀԱՐԻԲԱՄԵՆԱԿ ՕՍՄԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ
(1296—1896)

Ներկայ թվականին լրանում է օսմանեան հիւնդեաների նախորդ, հովանութեամբ պարապող թուրքման էլտողուլ-խանի որդու Օսման Ա. Ղարաբագրաւ (Անգորայի-վիլայէթ) անկախ իշխելու վեց հարիւրամեակը: Նա օսմանեան պետութեան հիմնադիրն է: Այդ պետութեան սկիզբը դրվեց մի փոքրիկ գաւառակից (ոչ աւել 10—20 քառ. վերստից), հետզհետեւ տարածվեց և մի ժամանակ ահա ու սարապի մէջ թողեց ամբողջ աշխարհը, տիրապետելով նրա մի ըստօրը մասը:

Այդ Օսման Ա. անունով էլ մինչև այսօր այս պետութիւնը ինքն իրան կոչում է Օսմանեան, կամ Օտոման, իսկ ժողովուրդը օսմանցի: Թէև ընդհանրապէս եւրոպացիները թուրքեա են անուանում, որովհետեւ էլտողուլի հայրը՝ Սելէման խանը Զինկիր-խանի արաւանքների ժամանակները, թուրքմանացի իր ընտանիքով, ազգա-

կաններով և ծառաներով փախել էր Հայաստան և ընտելութիւն հաստատել Եկեղեցա գաւառում, իսկ այդտեղից որդին՝ էլտողուլ-խանը, Ղանիայի Սելէուկեան Ալեքզէրին Ա. սուլթանից Ղարաբագրը ընտելութեան տեղ ստանալով, այնտեղ էր փոխադրվել իր թուրքման ազգականներով և խաչներով.— բայց այսօր օսմանեան իսլամ ժողովրդից և ոչ մի անհատ չի ընդունի թուրք ազգանունը (ցեղականութիւնը), նախատրեք և արհամարհանքի տիտղոս համարելով «Թուրքեա» բառը:

Էլտողուլի մահից յետոյ, երբ Ղանիայի Ալեքզէրին Ա. սուլթանն էլ մեռաւ և սելջուկներին իշխանութիւնը տուող մանր իշխանութիւնները բաժանվեց, Օսման Ա. 1296 թվին սկսեց անկախ իշխել իր գաւառում և իր ընտանեկան բարձրութիւններից, ասպատակային հովանեան ընկերներով գրաւել հետզհետեւ շրջակայ գաւառները: Որովհետեւ իշխանութիւնը տարածվեց նախկին բիւզանդական կայսրութեան գաւառներում և վերջապէս օսմանեանները տիրեցին Բիւզանդիային և՛ այդ իսկ պատճառով արաւագայի և ալէմ (պարսիկ) գիտնականները և պատմաբանները օսմանեաններին անուանեցին փաղի-չահի.— Բում (հոմայեցի արքայից արքաներ), օսմանեաններին իսլամն ընդունած հոմայեցի

սիայում: Սուլէյմ-Ջանքեդը Ալիբիլէի Միջերկրական ծովի ափերը մինչև Զիքալաւարի նեղուցը և Ալաշդեան ուղիքի ափերը, մասնաւորապէս լինելով օսմանեան իշխանի տիրուած տարածքներ, իրաւունք կը զգէր իրաւունքները: Նաուլ մոտին Ֆրանսիա Ռոնի հովիտով՝ գերմանացիներին դէմ կուէրու համար: Կարմիր ծովով, Պարսից ծոցով օսմանեան նաւերը հասնում մինչև Հնդկաստան, պորտուգալացիներին հեռացրին Գիո, Պոնտիկերի նաւահանգիստներից և իսլամական—խալիֆայական իշխանութեան գերիշխանական հռչակը հասցրին մինչև Հնդկաստանի խորքերի իսլամ ընտելիներին: Երեք անգամ Վիեննան սպառնացին և Վիեննայի ճամբարակապետութեան ուժերը ջլատելով՝ սարսափի մէջ թողին: Գերմանական կայսրերին (աւստրիական տոն) վախճան տարող աւել որպէս հարկատու ստորացրին իրանց իշխանութեան տակ տարեկան երեսուն հազար ոսկի առնելով:

Վեց հարիւր տարվայ մէջ և բեք հարիւր անգամից աւել արիւնահեղ պատերազմներ ունեցան արաբներ և ներքին, ցամաքով ու ծովով նախկին երեք դարերում՝ նորանոր նուաճումներ, և վերջին դարերում՝ պաշտպանվելու համար, բացի սահմանապահ փաշաների, բէգերի, զրաքի երկիրների վրա արած յարձակումներից,

են եղել չեղում գործել այդ կանոնից այն պատճառով, որ մասնատականները գրեթե ոչ մի քաղաքում չեն կազմում աղգաբնակիչների 1/5 մասը. մի քանի քաղաքներում, ինչպես Ղուբա, Շամախի, Նուխի, Լենքորան, Հին-Նախիջևան, մասնատականները կեսից աւելի են. ուրիշ քաղաքներում՝ Նրեան, Գանձակ, կեսն են կազմում, իսկ մի քանի քաղաքներում (Շուշի) յամանայն զեպս 1/5-ից աւելի են: Այդ պատճառով ոչ արգարութիւն է և ոչ էլ խնայել հիմք կայ սահմանադրական մասնատական տարրի իրաւունքը և հէնց այդ հանգամանքն է եղել զլխաւոր շարժառիթը, որ իշխանութիւնը որոշել է թոյլատրել, որ մի քանի տեղերում չեղուն գործվի օրէնսդրութիւնից:

Միւստորութեան նոր կարգադրութեան համաձայն, մասնատական ձայնաւորների թիւը կաւելի է (և ոչ թէ պարտաւորիչ) հասցնել մինչև ձայնաւորների ընդհանուր թիւի կէսը: Անշուշտ, միւստորութիւնը այլ կերպ էլ վարվել չէ կարող, որովհետև ընդհանուր իրողութիւն է, որ մեր երկրի մասնատական տարրը զեռ միանգամայն անպատրաստ է անկախ և ինքնուրոյն կերպով տանել քաղաքային ինքնավարութեան գործը, և այդ պատճառով թոյլ տալ, որ նա այդ գործում ղեկավարող հանդիսանայ, զեռ տուած չը լինելով իր կարողութեան և ընդունակութեան աղաքայնները,—այդ կը նշանակի գիտակցաբար մեծակ քաղաքային ինքնավարութեան գործին:

Պարզ է, որ օրէնքից չեղուն պէտք է գործադրել միայն այն զէպքերում և տեղերում, որտեղ այդ պահանջում են ինքնավարութեան գործի չափերը և որտեղ հնարաւոր է: Եթէ մի քաղաքում մասնատական աղգաբնակիչների մէջ կը գտնվեն հասուն, ընդունակ և պատրաստ անձինք վարելու քաղաքային ինքնավարութեան գործը, թող քրիստոնեայ ընտրողները, առանց ի նկատի ունենալու 1/5 թուանշանը, ընտրեն այդպիսիներին և հազ չէ, եթէ այդ պարագայում մասնատական ձայնաւորների թիւը կը հաւասարվի քրիստոնեաների թիւի հետ: Նոյնպէս եթէ մասնատական ընտրողները նկատեն, որ իրանց մէջ չը կան բաւական թուով պատրաստ մարդիկ, թող իրանց զուէն տան յարմար և ընդունակ քրիստոնեայ կանգնադրութիւն:

Մասնատական տարրի ամենամեծ սխալն այն է, որ նա քաղաքային ինքնավարութեան գործում ղեկավարվում է աղգայնական և կրօնական սկզբունքներով: Պէտք է մի անգամ ընդ միշտ հասկնալ, որ քաղաքային ինքնավարութեան մէջ ամենին տեղի չը պէտք է ունենան աղգայնական և կրօնական նկատումներ. այդտեղ չը պէտք է լինի ոչ ուսու, ոչ վրացի, ոչ հայ, ոչ թուրք. այդտեղ կայ միայն քաղաքացի և պէտք է ընտրել արժանաւոր, բանիմաց, ընդունակ քաղաքացիներին, առանց աղգայնութեան և կրօնի խտրութեան:

Հ. Ա.

աւարտութիւններին, գերեվարութիւններին և արինհանգութիւններին, պետութիւնը առանձին հրովարտելով պատերազմ է հրատարակել զրացի իշխանութիւններին զէմ 165 անգամ, որից՝

Գերմանիայի (Աւստրիա) և Ունգարիայի զէմ	30 անգամ,
Պարսից զէմ	24 >
Վենետիկցիների զէմ	21 >
Բելառուսական կայսրների զէմ.	14 >
Լեհաց զէմ (բացի Լեհաստանի և Գերմանիայի հետ միասին).	8 >
Ռուսաց զէմ (բացի Ղազախստանի արաւանքները)	13 >
Ալ և ալ մանր քրիստոնեայ իշխանութիւններին զէմ	23 >
Ալ և ալ մանր իսլամ իշխանութիւններին զէմ.	32 >

Ընդամենը 165 անգամ

Բացի ներքին նահանգների կառավարիչ փաշաների և զաւասանների վասայական բէյերի իրար զէմ կատարած անթիւ, անհաշիւ յարձակումներից, կոտորածներից ու բռնակալութիւններից, բացի ներխաճների բռնութեան զոհ գնացած փաշաների, բէյերի, նահանգապետների, զաւասանների, բիւրոյստների և պատճառով սպանվածներից, զոհվածներից, բացի փաշաներից զսպված մանր-

ՀԱՍՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐԸ

Հրատարակական ընկերութեան ընդհանուր ժողովը, որ կայացաւ կիրակի երեկոյան, մարտի 17-ին, դուռնի դահլիճում, գրաւել էր մեծ բաղնիքները թէ անդամների և թէ հանդիսականներին ժողովը բացեց վարչութեան նախագահ Ա. Քալանթար, առաջարկելով ընդհանուր ժողովի համար նախագահ ընտրել: Առաջարկված մի քանի թեկնածուներ՝ Ս. Բալազան, Ս. Մալխասեան, Ա. Սարգսեան, Ա. Բաբախանեան հրաժարվեցին այդ պաշտօնը ընդունելուց: Նախագահի պաշտօնի համար բաց կերպով քուէարկվեց միայն Աւետիս Արախանեանց և ընտրվեց ձայների մեծամասնութեամբ:

Ժողովի պարագլուխները սկսվեցին նախկին ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցանութեամբ, որը կարգաց ջարտուղար Յ. Ամիրխանեան: Անդամներից մէկը՝ Ս. Լիսիցեան, նշեց, որ արձանագրութիւնը կազմված է համառոտ կերպով, և չէ ներկայացնում ժողովի պատկերը ու վիճաբանութիւնների ընթացքը, և ցանկութիւն յայտնեց, եթէ կարելի է, նոր արձանագրութիւն կազմել: Այդ առաջարկը չընդունվեց, և նախագահը յայտնեց, որ ներկայ ժողովի արձանագրութիւնը կը կազմվի լիակատար կերպով և ըստ կարելոյն մանրամասն:

Այս կարգադրվեց ընկերութեան 1895 թվ. գործունէութեան տեղեկագրերը: Գրաւական հաշիւ առիթով ժողովականներից ոմանք՝ Տէր-Ղևոնդեան և Լիսիցեան այն կարծիքը յայտնեցին, որ ցանկալի է այդ հաշիւը աւելի մանրամասն տպագրել: Ուրիշները այն կարծիքի էին, որ տեղեկագրերը արդէն շատ մանրամասն է և կարելի չը կայ նոր մանրամասնութիւններ ւնեցնել: Քուէարկութեան ենթարկվեց Ս. Լիսիցեանի առաջարկը՝ զրաւական հաշիւը աւելի մանրամասն տպագրելու համար, և իս. Մալխասեան առաջարկեց, որ 1) յաջորդ տեղեկագրերին մէջ մտցնել ընդհանուր ժողովի արձանագրութիւնները և 2) չը տպագրվեն տեղեկագրի մէջ այն գրքերի անունները, որոնց մասին որ և է կողմնակի անձ զեկուցում է տալիս, քանի որ ցանկալի չէ, որ հեղինակները կամ թարգմանիչները իմանան, թէ ով է իր գրքի մասին այս և այն կարծիքը յայտնել: Այդ երկու առաջարկն էլ ժողովը ընդունեց:

Ներքին խօսակցութիւնների նիւթ կղաւ ընկերութեան կամ աւելի ձիւղ է աւել խմբագրական մասնաժողովի գործունէութիւնը: Ա. Սարգսեան հարց յարուցեց, որ ընկերութեան հրատարակած թարգմանութիւնների լեզուն անմշակ է, անհարթ, սատկի ենթարկված այն լեզուի աղգեցութեան, որից թարգմանված է, և

զերում ենիշարների իրանց կառավարիչների, հրամանատարների ղէմ բարձրացրած արժուկները, կոտորածները և կատարած փոփոխութիւնները, որոնցից մեծագոյն մասը յախտնական մոռացութեան անդունդն է զորված:

Հիւնքար Օսման Ա. խան Ղազիից մինչև ներկայ սուլթան Աբդուլ-Համիդ Բ. խանը Օսմանեան զահի վրա բաղված են երեսունչորս գահակալներ, չը հաշվելով հակաթուհները: Այդ երեսունչորսից ութը սուլթաններ թագաւորել են երեք ամիսից մինչև երեք տարի, հինգ սուլթաններ՝ մինչև ութ տարի, ինը սուլթաններ՝ մինչև տասն և հինգ տարի, երկուսը՝ մինչև քսանը հինգ տարի, ութը սուլթան երեսունից աւել, մինը քառասուն տարի և մինն էլ քառասունը եօթը տարի (սուլթան Սուլէյման Ա. Օսմանեանների ոսկեդարը):

Այս երեսունչորս սուլթաններից տասն և երեքը խայտառակութիւնով ենիշարների կամ վեղիւրների ձեռքով զահից վար են իրեցվել, բանտարկվել կամ խեղդվել են. տասն և մինը զաղանի կերպով պալատում թոնաւորվել կամ խեղդվել են, և բոլորս պատերազմի զաղում թըշնամիներից են սպանվել: Մինը գերութեան մէջ է մեռել, վեցն էլ իրանց բնական մահով են մեռել, երկուսն էլ ներկայումս ապրում են (մինը բանտարկված):

մատարար ամենից քիչ ձայն էր ստացել, ուստի և նա մնաց դուրս:

Ընտրութիւնները ընդունվեցան ծախահարութեամբ: Ժողովը փակվեց շատ ուշ, ժամը 12 1/2, և հէնց այդ ուշանալն էր պատճառ, որ շատերը զեռ քուէարկութիւնը չը սկսված հեռացան: Ահատարակ մեր ժողովներում հատարակութեան ժամանակը շատ է ժան է գնահատվում, աւելորդ խօսակցութիւնների հնորհիւ:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Ուրբաթ, ամսիս 15-ին, կայացաւ աշխարհագրական ընկերութեան կովկասեան բաժնի հերթական նիստը: Տօպօգրաֆ Պատուխով զեկուցեց իր ճանապարհորդութիւնը՝ զէպի Արազածի գլուխը և մօզական լապտերի միջոցով ներկայացրեց այն տեսարանները, որ բացվում են Արազածի վերին մասում: Հանապարհորդութիւնը նա կատարել է երկու տարի առաջ, ամառը:

Արազածի գլուխը ներկայացնում է մի. լայնատարած տեղ, որ նախապատմական ժամանակներում կազմում էր հարաւոր ընթաց, որ իր մեծութեամբ ամենանշանաւորներից մէկն է: Այդ բերանի երկարութիւնն է 2 վերստ և լայնութիւնը 1 վերստ 300 սաժէն: Արազածի արտաքին լալան հասնում է եղել մի կողմից մինչև Արաքսի ափերը, միւս կողմից մինչև Փամբակի սահմանը, երրորդ կողմից մինչև Կարս:

Արազածի վերին մասում ընդարձակ տարածութիւն պատած է ձիւնով, որ չէ հալվում և մի քանի կէտերում ամբարվում է տարուց տարի: Հին ժամանակները եղել են մեծ սառցալոյտեր, որոնք անհետացել են և այժմ նրանց տեղ կազմվել են լայնատարած արօտներ: Գեօղաւարայի հովիտում եղել է մի սառցալոյտ, որի մեծութիւնը հասնում է եղել 56 միլիարդ խորանարդ տոննայալի: Այժմ ձիւնապատ տեղերի մակերեսը թը հաւասար է 5 բառակուսի վերստի:

Տարածված կարծիք կայ, որ Արազածի գլուխը մի մեծ լիճ կայ: Պատուխով յայտնեց, որ այդ կարծիքը սխալ է. մեծ լիճ չը կայ, իսկ մանր մուշր լճեր Արազածի վերին մասում կան մինչև 42 հատ: Արազածի ծայրի մօտ եղած քարերը ենթարկվելով կայծակի յաճախակի հարուածներին, ծակծկվել են և կազմում են ֆուլգուրիտներ: Պատուխով ցոյց տուեց այդ ֆուլգուրիտներից նմուշներ:

Պատուխովի զեկուցումից յետոյ Ս. Ջելինսկի կարգաց իր զեկուցումը Շամախի քաղաքի մասին: Ջելինսկից պատմեց, որ այդ քաղաքը և Շիրվանի գաւառը մեծ կուռածաղիկ է եղել հին ժամանակները և ենթարկվել է զանազան փոփոխութիւնների: Նա շարունակում է նշանաւոր առեւտրական և արդիւնաբերական կենտրոն մնալ և այժմ, չը նայելով որ այնտեղից նահանգական հիմնակալութիւնները փոխադրվեցին Բազում: Այդ հանգամանքը զեկուցանողը բացատրում է նրանով, որ Շամախին գտնվում է խիտ բնակչութեան կենտ-

Ամենից փոքրահատակ՝ գահ է բարձրացել Մէհ-մէջ Գ., եօթը տարեկան հասակում և թագաւորել է քառասուն տարի, ամենից հասակաւոր գահակալն է Օսման Գ., յիսունուրեք ամեայ և թագաւորել է չորս տարի: Սուլթաններից ամենափոքրահատակն է Օսման Բ., խեղդվել է տասն և ութ տարեկան, ամենից շատ ապրել է Օրխան—75 տարի:

Օսմանեան սուլթաններից երեքը որպէս խելագար են գահից վար աւանդել, իսկ եթէ հաւատանք օսմանեան պետական պատմաբաններին՝ թեթեամիտների և ցնորվածների թիւը փոքր չէ գահակալների մէջ: Օրինակի համար Մէհմէջ Գ. պատերազմ էր իր սենեկապանին՝ ամեն օրվայ իր քաջագործութիւնները արձանագրել: Երբ մի օր արժանի բան չէր գտել գրեթե, սուլթանը իր նետը սենեկապանի՝ արտի ուղղելով խիտ է և ասում, որ գնայ և արձանագրել: Բայց և այնպէս շատ էլ հաւատարմ չէ օսմանեան պատմաբաններին, որովհետեւ իւրաքանչիւր սուլթան իր փառքը վսեմացնելու համար, ոչ մի միջոց չէր խնայում նախորդի գործերը նահանգներում, իսկ պատմաբանները իրանց հացի ու կենսաբի պայտիւթեան համար նոյնպէս ոչ մի միջոց չէր խնայել իրանց հետ ապրող վեհապետներին դուր գալու:

Աւարպետ

վերջին ժամանակներս մեր ժողովուրդը բոլորովին թմրած էր, և մեր փոքրիկ կոչման համարեա թէ չէր հետաքրքրուում մեր կեանքի զանազան երևոյթներով: Բայց անցեալ տարվանից սկսած մի առանձին շարժում ընկաւ մեր ճանաչած կեանքի մէջ: Եւ դրա հետեւեալը այն եղաւ, որ մենք սկսեցինք հետաքրքրուել հասարակական կեանքով, քիչ չառ զազաւար կազմակերպել մեր լրագրութեան և գրականութեան մասին: Դաւրացում տեղի ունեցան հանդէսներ, ստացվեցին լրագիրներ: Հասարակութիւնը սկսեց հետաքրքրուել մեր զարթոյնով և միահամուռ ցանկութեամբ վճռեց զարթոյնը կարգի դնել և նրան ազատել զանազան անընդունակ մարդկանց ձեռքէն: Փետրվարի 25-ին ձայների ահագին բազմութեամբ հողաբարձու ընտրվեց Յովհաննէս Մնտոյանց, իսկ անձնատնտեսութեան վաճառականաց:

ԲԱՂՈՒԻ դուռն ուրիշ է յատկացնել տարեկան 18 հազար թուրքի կտակարան պրոգրամադիա պահելու համար: Այդ որոշումով թաղում արդէն գոյութիւն ունեցող մասնաւոր պրոգրամադիան, որ պահում էր ուսուցիչ Պրոգրամայի, անցնում է լուսաւորութեան միջնորդութեան:

ԳԱՆՁԱԿԻ քաղաքային դուռն ձայնաւորները արդէն հաստատուել են: Հազարեւոր այդ լուրը, «ԲԱՅԱՅ» լրագիրը տեղացում է, որ Գանձակի նորընտիր թուրք ձայնաւորներից մէկը արդէն բանտարկվել է Հարամիտ անանկութեան պատճառով: Սկիզբը անաչող է, տեսնենք ինչ կը լինի վերջը:

ՇԱՄԱՆՈՒՅ մեզ գրում են. «Մեր քաղաքային ինքնավարութիւնը դեռ չէ կազմակերպված: Տարվա սկզբներից կազմված ցուցակներին միջոցով յայտարարված է այն անձերի անունը, որոնք, որքանի որ մասն վրա, պէտք է ընտրեն ձայնաւորներ: Յայտ անենք, որ մինչև մայիսի սկիզբը քաղաքացիներն անենանք»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տրապիզոնից գրում են մեզ. «Մարտի 4-ին Պիլիկից գրված նամակ մը կիմացնէ թէ 57 հայ բանտարկեալները արձակվեցան նոյն ամսոյ առաջի օրը»:

Ինչպէս յայտնի է, լոնդոնի հայկական հանդանակի մասնաժողովը դիմել էր լուրջ Սուրբիւրին, ինքզինքով բանալ մի ընդհանուր ազգային հանգանակութիւն թիւրքերի սովատանջ և տառապեալ հայերի համար, կտակարանութեան հովանաւորութեան ներքոյ: Այժմ, ինչպէս հազար գում է «Daily News» լրագիրը, լուրջ Սուրբիւրին յայտնել է, թէ որովհետեւ մինչև այսօր օտար երկրների սովաւորներն և տառապեալներն օգնելը եղել է մասնաւոր առատաձեռնութեան և կարեկցութեան գործ, ուստի նա օգտակար չէ համարում թագուհու կտակարանութեան միջնորդների պաշտօնական միջամտութիւնը այդ գործում:

Երիզայից մեզ գրում են. «Տեղւոյս բանտարկեալներու մէջ ալ չափի հիւանդութիւնը մուտք գտած է, որն սովի ու ալ և ալ չարաբանքներու հետ միացած՝ կեանքներն կը հնձէ»:

Տրապիզոնից մեզ գրում են. «Անցազգի պաշտօնէութիւնը վերջերս սկսած է «թէղքեղէ» չը տալ հայ ճանապարհորդներուն. հազարավայելութիւնը ընդհատուել կարելի է համարել:—Հիւանդ մը, որ դարմանվելու համար Պոլիս պէտք էր անցնել, արգելվեցաւ»:

Կ. Պոլսից հաղորդում են, որ Տարսնում, Ալանայի մօտ, հայերը նորից ենթարկվել են բռնաբարութիւնների: Ամեն տեղ հաստատ խօսում են, որ անկարգութիւնները կը կրկնվեն զարնան: Աւստրիական դեսպան բարոն Կալիչի մեկնումը տեղի է ունեցել Վիեննայի պահանջով և կապ ունի ընթացիկ գործերի հետ: Ամերիկա-

կան դեսպանը պահանջել է, որ ամերիկական հաւատարմութիւնը, որոնք ձերբակալված են յեղափոխական նպատակներով զէնք հասցնելու ամբաստանութեամբ, դատվեն ամերիկական օրէնքներով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս հաւատացնում է «Tribuna» լրագիր թղթակիցը, յայտնելը ասում են, որ Նիժի իրանը չը ստանային Փրանսիացիներից հրացաններ և փամբուլներ, չէին կարող պատերազմել: Պատերազմից յետոյ Մէնէլը Փրանսիական հանրապետութեան նախագահին նամակ գրեց, որով հաղորդում էր նրան իր տարած յաղթութեան մասին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 16 մարտի: Մտալիս գնացին Մեծ Իշխան Սեբեդ Ալեքսանդրովիչ իր ամուսնուհի, նոյնպէս և Կայսերական պալատների կօմիտեանը:

Մտակալի համալսարանի պրոֆէսոր Զախարին ուղարկեց ս. սինոդի օրէնք-պրոկլարացիոն 500,000 ռ. եկեղեցական-ծխական զարդոցների համար:

Կ. ՊՈԼԻՍ, 16 մարտի: Մարտի 14-ին հասաւ արտակարգ գնացքով բուլղարական Ֆերդինանդ իշխանը, Մտալիսի և Կիւսուրական ավիապի ուղեկցութեամբ: Կայսրանում ողջունեցին իշխանին Եւթերի-փաշան, բուլղարական կոնսիստի և էկզարքիտի պատգամաւորները: Պատուաւոր պահակաւորները զինուորական պատիւներ տուեց իշխանին, որը ուղղակի գնաց Խլիզ-Քեօսի: Հանդիսաւոր ունեւորութիւնը սուլթանի մօտ չարունակվեց կէս ժամ վաղը, սէլեմիքից յետոյ, իշխանը ներկայ կը լինի զօրահանդէսին, իսկ երեկոյեան կը ծախի Խլիզ-Քեօսիում:

Մտակալի օրդին, պրինց Ամէդէ-Ֆէնդին յանձնեց բուլղարական իշխանին խմբիկով ազամանդազարդ շքանշան:

ԼՈՆԴՈՆ, 16 մարտի: «Times» լրագիրն Կահիրէից հեռագրում են, որ եգիպտական պարսիկ վարչութեան ուսուցիչ Գրանտիայի անդամները պահանջեցին յետաձգումն, որովհետեւ պետութիւնների մէջ բանակցութիւնները դեռ եւ չարունակվում են:

Մտակալի յայտնած ցանկութեանը բացատրութիւն տաւ Վոյեյչիցի արշաւանքի վերաբերմամբ, եգիպտական կառավարութիւնը պատասխանեց, որ Անգլիայի համաձայնութեամբ, ինքն զիստակութիւն ունի նորից գրաւել այն թանգարանի երկիրը, որից փամբակաւորապէս զրկվեց տեղի ունեցող ապստամբութիւնների պատճառով: Դրանից երևում է, որ սուլթանը միջամտել է այդ գործում այն նպատակով, որպէս զի ստիպել եգիպտական կառավարութեանը՝ պարզապէս յայտնելու թէ արշաւանքի վերջնական նպատակն է նորից արել Սուէզիան:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 մարտի: Եւթերի-փաշան սուլթանի ատատ-սեկրետար Քեամիլ-բէյին ս. Աննայի 1-ին ատոմանի շքանշանը, գնդապետ Քեանի-բէյին Ստանիսլավի 2-րդ ատոմանի շքանշանը աստղով:

ԿԱՆԵ, 17 մարտի: Մարտի 15-ին, երեկոյեան 7 ժամին, այստեղի երկաթուղու կայարանը ժամանեց թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեդորովնայ: Մէկէկերուրդեան մեծ դքսի և դքսուհու կողմից Եւթերի Մեծութեանը ծախիկներ մատուցվեցին: Ռեզիս իշխանը խօսակցեց թագուհու հետ 10 րոպէ: Գնացքի հետանալու ժամանակ հասարակութիւնը աղաղակում էր՝ «կեցցէ Ռուսաստան»:

ՄՈՆՏԵՆԿԱՐՈ, 17 մարտի: Կայսրուհի Մարիա Ֆեդորովնա ժամանեց Տիրբի: Եւթերի Մեծութեանը կայարանում զինուորացիներ թագածառանց Ցեսարեվիչը, Մեծ Իշխանները և Իշխանուհիները: Ժողովուրդը աղաղակում էր՝ «կեցցէ Ռուսաստան»:

ՊԱՐԻՉ, 17 մարտի: Բէրլինը հրաժարական տուեց արտաքին գործերի միջնորդի պաշտօնից՝ հիւանդութեան և ընտանեկան հանգամանքների պատճառով: Նախագահը աստիճանից հրամանագիր, որով Բուրժուա արտաքին գործերի միջնորդ է նշանակվում: Ֆինանսների միջնորդ Գուստ Ժամանակաւորապէս կը կատարի ներքին գործերի միջնորդի պաշտօնը: Հաւատացնում են, որ Սարրին կընդունի արտաքին գործերի միջնորդութեան պորտֆելը: Լուր է պատում, որ Բուրժուա զիտաւորութիւն ունի տոնների ժամանակ էլի փոփոխութիւններ մտցնել միջնորդութեան մէջ:

ԼՈՆԴՈՆ, 17 մարտի: «Times» լուր է հաղորդում, որ Կահիրէի անգլիական դիւանատնական գործակալ լորդ Կրամէր հաստատվում է տալիս զէրվիշների դէմ արշաւանքին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 15-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . . 94 ռ. 35 կ.

Բերլինի վրա 100 մարկ	—	45	95
Պարիզի վրա 100 ֆրանկ	—	37	30
Ռոսի	—	արծէ	7 50
Մաքսային կուպոններ	—	149	—
Բորսային դիսկոնտ	—	6	7 1/2 0/0
40/0 պետական ընտան	—	98 1/4	—
Լեքսին 50/0 առաջին փոխառութ.	—	283	—
— երկրորդ	—	252 1/2	—
50/0 դրաւ. թղթ. աղն. կալ. բանկի	—	216 3/4	—
50/0 պետական երկաթուղ. ընտան	—	100 3/8	—
40/0 ներքին փոխառութեան	—	98	—
4 1/2 0/0 դրաւ. թղթ. աղն. կալ. բանկի	—	100 1/8	—
Աղն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.	—	—	—
4 1/2 0/0 վիլյայի. գիւղ. հող. բանկի	—	101 1/8	—
Փոխ. կրեդիտ. ընկեր. միտալ.	—	—	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրիգայիները	—	101 1/2	—
Մտակալի քաղաք. օրիգայիները	—	101 3/4	—
Օգէսայի	—	101	—
Թիֆլիսի	—	98 1/4	—
Թիֆլիսի կալ. բանկի 60/0	—	101	—
50/0	—	99 5/8	—
Գուստայի	—	60/0	100 50
50/0	—	99 1/2	—

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՈՒՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵՅ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐԱԳ ԻԻՂ
50 ԿՕՊ. ՖՈՒՆՏԸ
ՀԱԼԱԾ ԻԻՂ
30 ԿՕՊ. Ֆ.
Յ. ՄԵԼԻԻԲ-ԲԱՅՏԱՄԵԱՆԻ
սեփական աղարակի խանութում, Սուրբիւրի փողոց, Միլլերշտանների տանը, որտեղ վաճառվում է նմանապէս ԿԱՐ, ԱՐԱԺԱՆ և զանազան տեսակ ՊԱՆԻՐՆԵՐ: (№ 32) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԼԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Իր կանոնադրութեան 69 յօդուածի հիման վրա յայտարարում է, որ ընկերութեան պալ. Լիազորները հերթական ժողովը նշանակված է ներկայ 1896 թ. մարտի 26-ին, առաւօտեան ժամի 10-ին, Թիֆլիսի Գուստայի զահլիճում:

- Պ Ա Ր Ա Պ Ս Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ի Ա Ռ Ա Ր Կ Ա Ն Ե Ր Ը
- 1) Ընկերութեան 1895 թ. զործունէութեան տարեկան հաշուի քննութիւնը և հաստատութիւնը:
 - 2) Վերատուգող յանձնաժողովի ղեկուցադիրը 1895 թ. հաշուի քննութեան մասին:
 - 3) Ընկերութեան վարչութեան ղեկուցումները:
ա) 1/2 0/0 տուրքի մասին, որ ստացվում է փոխառութեան մասին յայտարարութիւններ արկելիս:
բ) 1895 թ. ղեկուցումների 31-ին կայացած լիազորների ժողովի որոշումը զործադրելու մասին, որով միաժամանակ պրէմիա է ստացվում:
գ) Վ. Ի. Զիլայի կայքերի մասին, որոնք մնացել են ընկերութեան:
դ) Ընկերութեան դատաստանական գործերի դրութեան մասին:
ե) Ընկերութեան տեխնիկական բաժնի կազմակերպութեան համար կազմված մասնաժողովի աշխատութիւնների մասին:
4) 1896 թ. նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը:
5) Ընտրութիւն. ա) մի ղերկատօրի վիճակով զուրս եկող Գ. Բ. Տէր-Ասատուրովի փոխարէն, բ) վարչութեան անդամների երկու կանդիդատների, գ) վերաքննիչ մասնաժողովի երկու անդամների, հերթով զուրս եկող Գ. Մ. Թամաշելի և Ա. Ս. Յուրիսովի փոխարէն, և զ) վերատուգող յանձնաժողովի երեք անդամների:
- 1—1

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐԵԻԸՆԿ.
Հնարողներ
ԾԱՂԿԵԱՅ ՕՊԵԼՈՆԻ
Զանազան զոյնի
Նորութիւններ և տուրքերի շուր
«ՕՊԵԼՈՆ»
ԶԳՈՅՇ ՊԵՏԻ ԼԻՆԵԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՅ
(ամ. 15. № 67) 9—12

- ՄՇԱԿԻ ԽՐԱԳՐԱՏԱՆԸ
վաճառվում են հետեւեալ հայերէն գրքերը
- | | |
|--|--------|
| 1) ԻՎԼԻԻՆԱ, Գրիգոր Արծրունու | 50 կօպ |
| 2) ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու | 20 " |
| 3) ՄՏԲԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալու մեանի | 50 " |
| 4) ՍԱՍՈՒՆ, Ա. Բալան թարի | 20 " |
- Օտարաբաղադրյալները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով: (№ 59) 2—10